



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14648

14649

14650

14651

14652

14653

1. Ար Բաճի խոսք Յովսէփ Եֆենդեանց
վերայ Քիփիս 1872
2. Ասարեցի Ա. Սահակ Պարբու կամ Հայրապետ
ՄԵՈՂ Կ. Պոլիս 1869
3. Հերբուճն պրահնդի վայրագանութեանց
Մաթթեազ Կորնուկիս 1861
4. Աբել Արիթարեանց : Հայոց սպի բազարական
վեճակը : Մոսկուա 1862
5. Անթ. Անիթրեթիկեանց : Արի համարտոս հայապ XIX դարի
հայ եղբարականորդան վրայ : Քիփիս 1874
6. Ասաթիւյանց Ատ. : Հայ իր դաստարականութեան
տղայոց : Ափիսիս 1859

347.6

15-69

104

221.319

y o - y u z

- 1) Sp. f. u. r. h. d. u. m. z. j. o. d. u. l. h. d. h. z. g. t. g. h. o. y - 1
- 2) K. u. h. e. y. z. y. u. p. p. t. e. z. u. p. p. z. u. g. h. e
- 3) z. p. u. p. p. u. g. h. e. z. u. p. p. u. f. u. d. n. e. z.
- 4) h. e. y. o. g. u. n. g. h. e. z. u. g. u. n. g. h. e. z. u. z. e. z.
- 5) h. e. y. t. e. u. n. g. h. e. z. u. g. u. n. g. h. e.
- 6) h. e. y. t. e. z. u. p. p. z. u. g. h. e. z. u. p. p. z. u. g. h. e.

U. p. t. e. n. j. u. i. e. y

~~U. e. u. h. e. y. z. u. p. p. t. e. z. u. p. p. z. u. g. h. e~~
~~z. u. p. p. z. u. g. h. e. z. u. p. p. z. u. g. h. e.~~

~~U. e. u. h. e. y. z. u. p. p. t. e. z. u. p. p. z. u. g. h. e. z. u. p. p. z. u. g. h. e. z. u. p. p. z. u. g. h. e. z. u. p. p. z. u. g. h. e.~~


2007

4. g. u. h. e

1869

2010

28071-57 ч. 2;



10597-57

B 2001



[Faint, illegible handwriting on a vertical strip of paper on the right side of the card.]

347.6
15-67

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻ ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ ՎԵՐԱՅ.

Յովսէփ Յովհաննէսեան Էֆէնդեանցը, ինչպէս երևում է նորա ծառայութեան ցուցակից, ծնաւ Ռուսաստան Աշտարխան քաղաքումը փետրվար ամսումը 1806 ամի և մեռաւ 'ի 24 Օգոստոսի 1862 ամի—ուրեմն ապրեց 56 տարի, վեց ամիս և քսանի մի օր:

Նորա ծնողքը, չունենալով կարողութիւն, բացի մի հասարակ կենալու տանից, ոչ թէ չըկարացին տալ նրան մանկութենից մի արժանաւոր ուսում, այլ և դժուարանում էին ապրուստի կողմանէ: Կամենալով գոնեա զբաղէտ շինել իրանց որդուն, տուեցին նորան Աշտարխանու Աղաբաբեան ուսումնարանը, ուր, ինչպէս երևում է կտակից, սկսեց նա իրայ ուսումը, որի պատճառաւ մահուան ժամանակը ընծայեց հազար ուրբի զբաղարանի համար առաւելուպէս հայոց գրեանք գնելու:

Յովսէփ Էֆէնդեանցը, զուրկ լինելով իրա մանկութեան ժամանակը մինչև անգամ առաջի պիտոյքներից, նոյն խի օրերից սկսում է սովորել համբերութեամբ տանել բոլոր պակասութիւնները իրաց կենաց մէջը. Այսպիսի նորա պակասաւոր զբուրթիւնը տեսնելէ բաւականին ժամանակ և միայն 18 ամաց հասակին ստանում է մի փոքրիկ միջոց թէ և էլի շատ սղմած ապրելու: Այս միջոցը ավելում է նրան ծառայութեամբ, մանելով, իբր պղատ ծառայող (вольвоопредѣляющійся), Աշտարխանու Գուբերնսկի Պրավլինիում կանցէլարիատի կոչմամբ յԾ-ն Օգոստոսի 1824 ամի:

Տեսնելով, որ այնտեղ չի կարող ունենալ մի ասպարեզ ծառայութեան մէջ—մանաւանդ որ պաշտօնակատարներու թիւը բաւականին սահմանափակված էր, նա որոշում է թողնել Աշտարխանումը ծառայութիւնը և գալ Վրաստուն:

Այստեղ թիֆլիզ քաղաքումը քանի մի ներուրթիւններից յետոյ, որ մարդս կարող էր ունենալ օտարութեան մէջ և չը քաւորութեան պատճառաւ, սա օգնականութեամբ մի քանի բարի մարդկանց մտնում է նորիցս ծառայութիւն իսպոյնիտէնի էկսպէդիցիայումը բարձրադոյն Կառավարութեան Վրաստանու (исполнительная Экспе-

длѣнія Верховнаго Грузинскаго Правительства, որ այժմն անու-
ւանումէ թիֆլիզը Գուբերնիի Պրավլէնիա) կանցէլարիատի կոչմամբ
ի 14 Ն Յունիսի 1827 ամի:

Որովհետև այն ժամանակներումը այլ տեղերից եկած մարդ-
կանցը ծառայութեան համար այստեղ, համաձայն հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅ-
ՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ 'ի 19 Գեկտեմբերի 1803 ամի, շնորհվու-
մէր առանձին արտօնութիւններ և որովհետև իրայ ջերմեռանդ ծա-
ռայութեամբ դարձրել էր իրայ գլխաւորի ուշադրութիւնը, վասնո-
րոյ նա արժանացաւ ստանալ առաջի աստիճանը Կոլլէժիսի Բէգիս-
տրատորութիւնը 'ի 14 Յունիսի 1827 ամի:

Իմանալով, որ սա լաւ պարագոյններից մինն է իրայ պաշտօնի
մէջ, Վրաստանու Քաղաքական Գուբերնատորի պաշտօնակատարը
վերափոխումէ նրան այս ծառայութիւնից Թագաւորական Էկսպէդի-
ցիաումը (Казенную Экспедицію, որ այժմն Թագաւորական Պալատ
է անուանում — Казенная Палата) յ2-ն Հոկտեմբերի 1828 ամի,
բայց թէ ինչպիսի պաշտօն է ստանում այստեղ, այս չէ երևում
իրայ ծառայութեան ցւեցակիցը:

Յովսէփ Էֆէնդեանցը, չունենալով աչքի առաջ մի արժանա-
ւոր պաշտօն և գիտենալով որ նորա ստացած փոքրիկ ուժիկը չէ
կարող բաւականանալ նրան, որովհետև աստիճան ստանալուց յետոյ
կամուձեր աւելի պատշաճաւոր պահել իրան, խնդրումէ և կարգվու-
մէ Թարգմանիչ նոյն Էկսպէդիցիայի առանձին յանձնարարութեանց
համար նշանակած պաշտօնակատարի մօտ և սպա մնումէ նորա
մօտ և փոխումէ իրայ ծառայութեան տեղը Ելիսավէտուպօլու երկա-
թի մադանի Կանտորը 'ի 23 Մայիսի 1829 ամի, համարվելով
նոյն Էկսպէդիցիայի ծառայութեան մէջ:

Չորդիմանալով Ելիսավէտուպօլու եղանակին, որնոր, ինչպէս յայտնի
է, առողջարար չէ իրայ թանձր օդովը—մանաւանդ Ռուսաստանուց եկած
մարդկանց համար, սա թողնումէ և դուրս է գալի ծառայութիւնից, մնա-
լով մինչ ութ ամիս պարապ: Աստուած յաջողումէ նրան շուտով գտնել
մի այլ և աւելի բարձր տեղ, նշանակվումէ առաջվայ Արդրումու գաւառա-
կան ժամանակաւոր Կառավարութիւնումը առանձին յանձնարարու-
թեանց պաշտօնակատար (въ бывшее Арзрумское Областное вре-

менное Управление чиновникомъ особыхъ порученій) և մտում, Արզրումումը մինչև Ռուսաց զորքի այն տեղեց զուրս գալը այն է մինչև ցՏ-ն Յունիսի 1830 ամի: Սա, երբ կարգվումէ Ախալքխու գաւառական կառավարութիւնը, հաստատվումէ նոյն պաշտօնի մէջ 'ի 23 Յունիսի 1831 ամի և արժանանումէ երկրորդ աստիճանին, այն է զուբերնակի սէկրէտարութեանը, յ 31 Գեկտեմբերի 1832 ամի: Այս տեղ աւելի չէ յաջողում սորան ծառայութիւնը և, ունենալով մի քանի անբաւականութիւն իրայ զլիաւորի հետ, զուրս է գալի պաշտօնից 'ի 17 Փետրվարի 1833 ամի:

Կարօտ լինելով չքաւորութեան պատճառաւ ապրուստի միջոցներին, նա նորիցս մտնումէ ծառայութիւն և նշանակվումէ Թարգմանիչ Հայոց լեզուի Ախալքալաքու գաւառական կառավարութեանումը 'ի 22 Մարտի 1833 ամի: Այս տեղաց ևս մի քանի ժամանակից յետոյ դուրս է գալի իրայ պաշտօնից և մտնումէ էլի նորիցս ծառայութիւն և ստանումէ Ախալքխու Պօլիցխայի Չասանի Պրիստավութիւնը:

Որովհետև այս պաշտօնը ևս ոչ թէ չէ խօստանում նրան մի նիւթական միջոց ապագայում, այլ և անտանելի է լինում իրա բնութեանը, վասն որոյ մի քանի ժամանակից յետոյ թողնում է այս պաշտօնը և մտնումէ Կովկասեան զօրաց Պօլէվօճի պրովինստակի Կամիսիայումը կամիսիօնէրութեան պաշտօնաւ 'ի 28 Յունիսի 1835 ամի և ապա նշանակվումէ տեսուչ Ղուբու հացի պահարանի 'ի 23 Սեպտեմբերի 1835 ամի:

Այս վերջի պաշտօնը նոյնպէս չէ բարելաւացնում այնքան նորա կեանքը, որովհետև հաւատարիմ լինելով ծառայութեանը, նա մի առանձին վատտակ չէ ստանում նորանից. նա շարունակումէ միայն, ինչպէս ասումեն, հուպ տալ իրայ ծախսերին և այնպէս մի քանի շահի հետ գցել իրայ սև օրերի համար: Երկու տարից յետոյ համաձայն 323 յօդ. IX հատորի զինուորական օրինացը սա պարաւարված թողնումէ այս պաշտօնը և արձակվումէ պաշարանի տեսչութիւնից 'ի 19 Օգոստոսի 1837 ամի. Այս ծառայութեան մէջ նա առաջարկվումէ և յէնատի ուկագովը 'ի 13-էն Յունվարի

1839 ամի համարաւ 5311 արժանանումէ կոլլեժսկի սէկրէտարութեան աստիճանի:

Ապահով լինելով փոքր 'ի շատէ նիւթական միջոցով իրայ ծախսերը կարճացնելով ամէն տարի, նա 'ի 28 Յունվարի 1839 ամի ամուսնանումէ օրիորդ ազնուական Նունիա Ղօրղանեանցի հետ և ապրումէ մինչև մահը խաղաղ կենօք:

Առաւարութիւնը, բաւական լինելով նորանկից, շատ ժամանակ չըթողեց նորան առանց տեղի և կարգէց յՁ-ն Մարտի 1839 ամի դիտանցիօնի կօմիտիօնէր Էօթներըող դիտանցիայի, բայց սա, իրայ մասնաւոր գործ ունենալով, չըկարաց աւելի մնալ և արձակվեցաւ համաձայն խնդրանօք 'ի 20 Ապրիլի 1842 ամի:

Գիտենալով, որ Ինդէնդանտատվայի ծառայութեամբ նա կարողէ մի քանի քայլ առաջ գնալ կեանքը ապահովացնելու համար, որովհետև այստեղացի պաշտօնները կապ ունին հացի վաճառականութեան հետ, ուստի ուրեմն ժամանակով հացի տէր կարողէ դառնալ — մանաւանդ որ առաջ էլ ծառայած է լինում այնտեղ, սա իրայ գործը աւարտելուց յետոյ նորիցս մանումէ Ինդէնդանտատվում և նշանակվումէ պրօվիանտսկի կամիստումբ կամիսիօնէր 'ի 12 Մարտի 1843 ամի և ապա կարգվումէ Օտրիասնի կօմիսիօնէր Հիւսիսային Գաղտանու զօրաց:

Այս ժամանակից սկսումէ նա պարապիլ մասնաւոր կապալներով (փողրաթներով) փոքրիկ մասներ վերառնելով զօրաց համար հաց վերառնող ընկերութիւնների հետ, որ և միշտ յաջողումէր նորան, որովհետև նա ունէր այս բանի մէջ բաւականին փորձ և ընդունվածէր իբր հաւատարիմ և գործունեայ մարդ: Այսպիսի գործերը, որից ապագայումը իրայ հացն էր սպասում նա, այնքան զբաղեցրին նորան, որ հարկադրվածէր մի քանի ժամանակ ձգել իրայ պաշտօնը, որ թողեց 'ի 12-ն Ապրիլի 1844 ամի և 'ի վերջոյ բորբովին դուրս էկաւ ծառայութիւնից յ31-ն Մայիսի 1846 ամի:

Այս գործերը ևս աւարտեց նա յաջողութեամբ և իրայ առաջվայ մի քանի յետ զցած փողերուն աւելացուց նոր աշխատած գումարը և զրեց այսպէս հիմն իրայ ապագայ բարեխառութեանը: Այսպիսի նորա կարողութիւնը թէ և չէր նշանաւոր, բայց այնու

ամենայնիւ սկսումէ, ինչպէս և յառաջ, որքան կարացել է, օգնել ծնողաց և իրայ եղբոր կարասպետին, տալով մինչև անգամ իրայ հօր պարտքերը և հաստատելով վերջապէս նորանից մնացած փոքր տունը իրայ հողով իրայ եղբոր փրայ: Չընայելով աշխատութեանը, որով կարողէր աւելի լաւ ապրել, քանց թէ ինքը ապրումէր, նա շարունակումէր իրայ առաջվայ կեանքը թէ և փոքր ինչ լաւ, քանց թէ առաջ, զրկելով շատ անգամ թէ սրտի ուզած կերակրներէցը և թէ միւս պիտոյ քներէցը:

Նորա թոյլ մարդկային բնութիւնը և իցէ փոքր ինչ աշխարհի փառքը չըթողեց նորան մնալ այսպէս և վասն որոյ նորիցս մտաւ ծառայութիւն, նշանակելով Պոլեմոյի պրովինտոսկի Կամիսխատուք առաջ, այն է յՅ-ն Մայիսի 1847 ամի, կամիսիօնէրական պաշտօնումը առանց ուժի և ապա ՚ի 15-ն Հոկտեմբերի 1848 ամի իբր շտատնի կոմիսիօնէր ուժ կով զանազան յանձնարարութեանց համար: Այս տարին այսինքն ՚ի 4-ն Դեկտեմբերի նոյն ամի սա ստանումէ արդէն չորրորդ աստիճան այն է Տիտուլիարնի Սովէանիկութիւնը, և ապա արժանանումէ մի կողմանէ Կայսերական բարեհաճութեան իրայ լաւ ծառայութեան համար ՚ի 22-ն Յունիսի 1852 ամի, միւս կողմանէ տարեկան 81 ո. 81 կ. իրայ հինգ տարվայ անկեղտ և մաքուր ծառայութեան համար վրաստանումը յԾ-ն Ապրելի 1853 ամի, երրորդ կողմանէ Կայսերական պարգևի, ստանալով ՚ի 21-ն Ապրելի 1854 ամի իրայ կէս տարվայ ուժիկը 163 ո. 69 կգ. և ՚ի 22-ն Օգոստոսի նոյն ամի նշան քսան տարվայ աննախատելի և մաքուր ծառայութեան համար: Այս 1854 տարեց սկսումէ առաւել բարեխաւանալ նորայ զրութիւնը թէ ծառայութեան մէջ, ուր ստացաւ հինգերորդ աստիճան Կոլլեժակի Աւէսսորութիւնը և քսան և հինգ տարվայ նշան սրբոյն վարդիմիրայ և ապա նադվորնի սովէանիկութիւնը և նշան սրբոյ Ստանիսլաւայի վզ վերայ, և թէ մասնաւոր կեանքի մէջ, ընդարձակելով իրայ զործունէութիւնը թէ հացի կապարաւութեանց մէջ ընկերութեամբ ուրիշների հետ և թէ բարեկամութեամբ աւելի բարձր աստիճանի մարդկանց հետ:

Ապահովելով իրայ զրութիւնը աւելի հաստատ, նա մի քանի

տարից յետոյ ընծայումէ իրայ կիտջը իրոյ առաջը վաստակի պտուղը, այն է երկ' յարկեայ քարեայ տունը թիֆլիզումը Սօրթակի թաղումը իրայ հողով, որ ընդ ամէնը կարծէր այն ժամանակ մինչև աստը հազար ուրբի, հաստատելով թուղթը դադատանական կարգաւ նորա անունով: Գողով հանդիստ իրայ խաղաղաբար բնութեամբը, նա իրայ ընտանեաց մէջ վայելումէ սէր և քաղցրութիւն առանց մի շփոթի մինչև վերջեօրերը: Սովոր լինելով մանկութենից համեստ ապրելուն, սա շարունակումէ կեանքը խոհեմ կերպով, չըթոյլ տալով ոչ իրայ զվեխն և ոչ ընտանեացը շուայլ ապրելու և երբ նորա բարեկամները հանաք անելով ասումէին նրան յբաւական է այդքան կուչ ու հուպ գալը ⁶, նա պատասխանումէր—ինչ է դուրս գալի հարուստ ապրելուց և եթէ առողջութիւնը և տան հեռաւորութիւնը փողոցից և ծառայութիւնից ներքին նորան, նա պատրաստ էր ևս ծախել իրայ սարքած Ֆայետօնը, որովհետև ակոքաւորի պահելը մէկ բան չէ, իսկ փորը ներքէն է և ոչ թէ վերեւը, ասումէր նա, աւելացնելով, որ աւելորդը էլ լաւ է դործ գնել բարի բանի համար, քանց թէ մխտել ունայնաբար:

Ողորմած լինելով չըքաւորներին, նա ձեռից եկածը երբէք չէր խնայում նրանց համար և պատրաստի էր միշտ օգնութիւն անել, տալով շատ անգամ մինչև թագաւորական և քաղաքական հարկերը, որովհետև շատերը դառն արտասուքով լաց էին լինում, երբ նրանց տակի զգեալ շորեղներ և ամէնօրեայ կերակուր եփելու պըղնձները դուրս էին բերում տանիցը ծախելու: Խմանալով, որ թիֆլիզ քաղաքին մօտ Յխէթայ անուանեալ վրաց գիւղումը կան բաւականին հայք և չունին եկեղեցի, նա ուրախութեամբ օգնութիւն է անում և յանձնառնում շինել ըստ մեծի մասին իրայ փողով մի փոքրիկ, բայց նրանց բաւական, քարաշէն եկեղեցի մինչև գմբէթը և այս Աստուածահաճոյ և դովիլի գործը կատարումէ իրայ ձեռօք և իրայ կենդանութեան ժամանակը: Կան և մի քանի առաքինական գործեր, որի մէջ գլխաւորապէս 'ի հարկէ նորա այսօրվայ կտակն է, բայց այսքանը ևս—մանաւանդ կտակաւ աւանդածը—կարծենք բաւական են մեր առարկայի համար—առաւելապէս որ չունինք մենք աւելի մասնաւոր տեղեկութիւններ նորա կեանքի մասին: Ափսոսումենք որ նորա կեն-

գանութեան ժամանակը հանած պատկեր ևս չունէինք, որ տպելէինք որի պատճառաւ աւելի ճշտութեան համար տպեցինք այն պատկերը, որ մեռած ժամանակը նորայ Նունեայ ամուսինը հանելէր տվի Ֆօտօգրաֆիայով :

Այսքան ասելուց և յիշելուց յետոյ մտում է մեզ և ամէն կարգացողին ողորմի տալ նորան և նորա ծնողացը, որ այնպիսի բարեմիտ և ազգասիրական հոգւով լի որդի թողեցին մեզ — ասում ենք ազգասիրական հոգւով, որովհետեւ նա, գիտենալով որ ժառանգ չունէ և ոչ թէ այնքան ժամանակեայ ամուսնութէնից յետոյ սպասելու է, երբէք չունենալով ոչ մի որդի — մանաւանդ որ ինքնէլ փոքր ինչ չափահասէր, կարողէր միւսներու նման շքեղ, զարգարած և զանազան կերակրեաց ճաշակներով ապրել, բայց ոչ, նա աւելի լաւ համարեց իրայ գլուխը գրկել ամէն վայելչութէնից և Հայ դաւակներուն զարգացնել ազգիս համար, քանց թէ յունայն և շուայլ կերպով վասնել իրայ կարողութիւնը: Այ՛ն զարգացնել կամեցաւ նա և ահա՛ այսօր ողորմութեամբ Աստուծոյ նորա գումարի տոկօսիքով մինչև ցայսօր, այն է եօթը տարվայ միջոցումը, երբ նորա մայրգումարները ժողովեցան, արդէն վեց որդեգիր աւարտեւին իրանց ուսումը Ներսիսեան Ազգային — Հագեոր դպրոցումը, երկուսը արձակվելին հիւանդութեան պատճառաւ, իսկ մին որդեգիրը աւարտողներէց և առանձին երկու երթեակ աշակերտներ, համաձայն 16 և 19 յոդ. կտակի, կատարելագործվելին վերին ուսումնարաններումը թէ ուսման և թէ արհեստի մէջը զխանական կերպիւ: Նրանցից այն է Յարութիւն Աբէլեանցը անցեալ տարի Յիւրիտումը արժանացել է ևս դօկտօրութեան կոչման քիմիայի գիտութէնից հարցաքննութիւն տալով և հրատարակաւ սրաշտպաններով իրայ սպած գեսէրտացիան դերմանական լեզուաւ “ueber den Bichloraether”, բացի սորա տան և հինգ չքաւոր հայ օրիորդներ մարդու են գնացել հայ ազգի մարդկանց և երեք հազար հինգ հարիւր ութը տվվելին այստեղացի հայոց թէ տղայոց և թէ օրիորդաց ծխական ուսումնարաններուն չքաւոր ուսանողներէ պիտոյքների համար, որովհետեւ երկու հազար ութը իրեղնները արդէն բաժանած են և հազար հինգ հարիւր ութը ուղարկած են նոյն Ներսիսեան ուսումնարանի հոգաբարձութիւնը հարկաւոր

պիտոյքները հոգալու նոյն ուսումնարաններու չքաւորներու համար:

Յանկալի կը լինել, որ ուրիշներն էլ հետեւային հանգուցելոյ օրինակին—մանաւանդ բարձրագոյն ուսումնարաններ լաւագոյն ուսումնաւարտ աշակերտների ուղարկելու մասին: Նա, Ճշմարիտ է, չքմոյեց մարմնաւոր զաւակ, բայց նորա այսօրվայ արած գործը միշտ իրան զաւակ է և յիշատակ—Աստուած նորա հոգին լուսաւորէ և նորա հոգւոյ զավակացը բարի-միտ տացէ յօգուտ ազգիս:

ԿՏԱԿԱԿԱՍԱՐՔ } ԳՐԻԳՈՐ ԻԶՄԻՐԵԱՆՅ
 ԱԻԵՏԻՔ ՍՎԷՉՆԻԿԵԱՆՅ



Ես ներքոյ ստորագրեալ՝ Յովսէփ Յովհաննէսեան Էֆէնդեանց (Նաղփօրնի Սօվեանիկ) բնիկ Հաշտարխանցի և այժմ Քիֆլիկ վերաբնակեալ, գորով հիւանդացած և ցանկանալով լըւցանել իմ քրիստոնէական պարտաւորութիւնս, իմ խղճի մնաց ազդեցութեամբը յօժարեցայ, քանի որ միաքս առողջ է և յիշողութիւնս հաստատուն, զրել հետեւեալ իմ հողերը կտակը, որպէս զի իմ մահուանից յետոյ մի կողմանէ ոչ մի վեճի անդէք չմնայ և միւս կողմանէ իմ թողած կայքս առաւել շահաւոր կերպով 'ի գործ դրուի:

1) Իմ թողած կարողութիւնս բոլորն շարժական կայքերից բաղկանում է, և է հետեւեալը. անական կահարասիք, կառքեր իւրեանց ձիաներովն և սարեօքքը և զբամազումար, ըստ մասին առձեռն պատրաստ և ըստ մասին բաղիացեալ արքունի սեղանատան (բանկ) և մասնաւոր անձանց մուրհակներէց: Այս ամէնը մի առ մի և պարզաբար դրուած են առանձին հաշուեմատենի մէջ, որ և իմ ձեռքովս և իմ ստորագրութեամբս և կնքովս վաւերացնելից և թերթերու թիւը նշանակելից յետոյ պահ եմ ապի Քիֆլիկու Պատուաւոր քաղաքացի՝ Աւետիք Բուդղանեան Սվէնիկեանցին իսկ իմ անուանական կնիքս (մհհր), որով կնքած է այն մատենը, յանձնեցի իմ կտօն՝ բնիկ ազնուուհի Նունէի դստեր Մովսէսի Ղորղանեանց:

2) Որովհետև ունիմ ես և հարազատ եղբայր, որ է կարապետ Էֆէնդեանցն, բնակիչ Հաշտարխանու, վասն որոյ հարկաւոր եմ համարում այստեղ պարզաբանել. թէ ես ինչ կայանք որ թողնում եմ, բոլորը իմ արդար վաստակն է և իմ երեսի քրորնքով ճարած. իսկ ինչ որ հօրից ու մօրից ժառանգութիւն էր մնացել, այն ամէնը արդէն շատ յառաջ ես տուել եմ նորան (եղբօրս), բացի սորանից իմ սեպհական փողով Հաշտարխանումը տուն եմ գնել նորա համար և նորա անունովն և թողել եմ իրաց հողովը բոլորովն նորա լեակատար իրաւանց տակ, նաև ամէն անգամ, որքան իմ կարողութիւնս տարել է, օգնել եմ նրան զա-

նազան միջոցներով, որչափ որ նա կարտաթիւն է ունեցել: Թէ այս մասին և թէ այն մասին, որ նա իմ կայանքի վերայ ոչ մի իրաւունք չունի, ունիմ ես նրանից տուած առանձին ստորագրութիւն 1848 թուականից Մայիսի 1-ից համարաւ 77. վաւերացուցած տեղւոյս հասարակաց գործոց Նօսարիուսի Մաճապարիանի ձեռամբ:

3) Նոյնպէս ոչ միայն իմ հօրից ու մօրից ոչինչ ժառագարութիւն չեմ ստացել, այլ ընդհակառակն նրանց վերջին ժամանակներումը պահել եմ, որքան իմ կարողութիւնս տարել է և հօրս պարտքը վճարել եմ Պարունրեղեան հանգուցեալ Տէր Յովհաննէս քահանային: Վանորոյ, ձեռս սրտիս վերայ գնելով, որոշեցի իմ գրամաղուխս այսպէս անօրինել իմ մահուանից յետոյ:

4) Իմ թաղման համար և այլ քրիստոնէական ծէսերն իմ մահուանից յետոյ մի տարւոյ միջոցումն կատարելու համար նշանակում եմ 3000 ուրբլի արծաթ. այս գումարը յանձնելու է իմ կնոջս, Նունէին, և թողնելու է նորա անօրինութեան ներքոյ առանց հաշիւ պահանջելու այն պայմանաւ միայն, որ իմ թաղման օրս 500 մանկթ բաժանէ աղքատաց:

5) Իմ կնոջս Նունէի Մովսիսեան Էֆէնդեանցին, որ է բնիկ Թիֆլիսցի և Ղորղանեանց տանից, ինչպէս վերեւն տուած է, տալիս եմ լիապէս ՚ի վայելք նորա բոլոր իմ տնական կահկարասիքս, նոյնպէս և իմ կտօքերը ձիաներով և սարեօք. բաց յայսմանէ տալիս եմ նորան իբրև լիովին և անդառնալի սեպհականութիւն 30,000 ուրբլի որ և միանգամ և եթ ընդունելով այս գումարը, մինչև ՚ի վախճան պարտի բաւականանալ սորանով առանց վէճ ինչ բաց անելու, նաև ոչ իւր բաժինքի փողի մասին, որ ընդ ամէնը 1500 ուրբլի է եղել և այս գումարիս մէջ է պարունակուում: Իսկ այն տունը, որ քաղաքիս առաջին բաժանումն է շինած, որոյ մէջ բնակում եմ իմ կնոջս հետ ՚ի միասին, բոլոր նորա տակը եղած գեանտիլն, բոլոր շինուածքներովը, բակովն և պարտիզովը բաղկացում է իսկական սեփհականութիւն իմ կնոջս վասն որոյ և ինձանից յետոյ ոչ որ իրաւունք չունի նոյն տան և նորա գեանի մասին վէճ բանալու:

6) Իմ հարազատ եղբորս Կարապետ Էֆէնդեանցին, որին ա-

ուանց էն էլ բաւական օգնութիւն եմ ցոյց սուեւել և այս բողոքն էլ նրա համար անօգուտ է անց կացել, ապիս եմ միանգամ և եթ 1000 ռուբլի արծ.*): Յոյս ունիմ որ նա ինձի կներէ, որ ես իմ բողոք կայքս թողնում եմ հասարակօգուտ գործոց համար: Բան է եթէ սա որպիսի և իցէ գանկատ բաց անէ, իմ կտակակատարքն ունին իրաւունք, եթէ արժան համարին, զրկել նրան և այս փողից որովհետեւ ինձ ցանկալի այն է, որ իմ եղբոր կողմանէ իմ կտակակատարաց զուր նեղութիւն չհասնի, նա մանաւանդ որ, սորա, իմ կամքը կատար ածելու աշխատութիւնը վեղ կախելով, միայն ազգաօգուտ գործոց նպատակով են և այս գործումն չարչարանքից աւել ոչ մի շահ չունին անձնական:

7) **Իմ ազգակցին Սովիոյ Ղամաղեանցին** ապիս եմ միանգամ և եթ 3000 ռուբլի արծաթ:

8) **Իմ աներորդուդն, ասնուատոհմ Սէրգէյ Ղորղանեանցին**, թողնում եմ իրա պարտքը 8723 ռուբլի արծաթ, որ ինձ մուրհակով (բարաթ) պարտական է, ուստի այսուհետեւ նորանից չունիմ ոչ մի պահանջելիք: Նոյնպէս էլ Ղրիգոր Կոկորովին նորա չքաւորութեան պատճառաւ թողնում եմ 600 ռուբլի պարտքը, որ նոյնպէս հասնելու էր ինձ նորա մուրհակով:

9) **Իմ խոտովանահօրս՝ Բօլնու Տէր Աւետիք քահանային Պօպովեանցին** սալ միանգամ և եթ 500 ռուբլի արծաթ:

10) **Ռրովհետեւ ես դատարարակութիւն եմ առել Հաշտարխանու Ազարբեան դպրոցի հիմնադրի ծախքովն**, վասն որոյ ի նշան իմ երախտագիտութեանս ապիս եմ 1000 ռուբլի արծաթ. որպէս զի այս գումարով նոյն դպրոցումն մի մատենագարան (Библиотека) հաստատուի առաւելապէս հայերէն գրքերու:

11) **Մի և նոյն նպատակով և նոյնչափ գումար սալիս եմ յօգուտ մատենագարանի Թիֆլիզու Ներսիսեան — Ազգային — Հոգևոր դպրոցի:**

12) **Նոյն Ներսիսեան դպրոցի չքաւոր երթեկ աշակերտաց վիճակին վերայ կարեկցութիւն զգալով**, նորանց հագուստը նորոգե-

*) Առանձին յանձնարական թղթով սրատիրել է ևս սալ նորան 2000 ռուբլի, եվան Վասիլէվին՝ 300 ռուբլի և Նիկոլայ Խլանովին՝ 300 ռուբլի:

ընդ համար կտակում եմ միանգամ և եթ 600 ուրբի արծաթ:

13) Որովհետև ամէն շայի պարսականութիւնն է, որքան իր կարողութիւնը տանում է, պահպանել շայատանի հին յիշատակներն, որոնք ամէնից լաւագոյն վկայում են մեր քրիստոնէական պայծառութեանը, մեր կենացը և մեր ճաշակին և որովհետև այսպիսի արժանաւոր յիշատակներից մինն է Նրեանից մօտիկ գտնուած Գեղուարդավանքը, որոյ ճանապարհը դժուարագնաց է մինչև ևս անհնարին է, վասն որոյ վանքի ճանապարհը շինելու համար կտակում եմ 2000 ուրբի, որով երթեկութիւնը կարելի է հեշտացնել միանգամայն ամենեցունց, նոյնպէս և այն ճանապարհորդներու համար, որոնք շատ անգամ զարմացած մնում են այս վանքի շինուածոյ ճարտարապետութեանը և մեր շայոց աշխատութեան և հաւատոյ պայծառութեան վերայ: Հուսկ ուրեմն որքան գումար որ մնում է, բոլորն տալիս եմ յօգուտ այս տեղացի Ներսիսեան—Ազգային—Հոգևոր Գալրոցի:

14) Յիշեալ գալրոցի համար կտակած գումարս տալիս եմ այն պայմանաւ, որ նորա բերած տոկոսովն դաստիարակութիւն ստանան նոյն գալրոցումը աշակերտներ առաւելապէս շայոց Նկեղեցւոյն պաշտօնեաներ պատրաստելու նպատակաւ:

15) Այս աշակերտքը, որոնք կոչուելու են իմ անունիս (Էֆէնդեանցի) որդեգիրք, պիտի ընտրուին չքաւոր շայերու զաւակներից, առանց ջոկելոյ նոցա ազգատոհմը և հայրենիքը, որովհետև այս պարագայիս մէջ մարդու ընդունակութիւնն է ամենահարկաւոր պայմանը, իսկ այս պայմանը ոչ ծագումովն և ոչ ծննդեան աշխարհովն չի որոշուիլ:

16) Սրանց միջից առաւել ընտիրները և առաւել շնորհալիները կտակահատարաց հաւանականութեամբ ուղարկուին բարձրագոյն ուսումնարաններ և սրանց ամէն մէկի տպրուտի համար նոյն գումարի տոկոսիցն տուուայ տարեկը 300 ուրբի արծաթ:

17) Այս որդեգիրքը ուսումն աւարտելից յետոյ պարտաւոր են, եթէ հարկաւոր համարուի, ծառայել Ներսիսեան ուսումնարանումը և միւս շայոց ծխական գալրոցներումը ուսուցչի և վերակացուի պաշտօնով, — երկու տարի ժամանակ միայն Ներսիսեան գալրո-

ցի մէջ ուսում աւարտողներն և չորս տարի ժամանակ—բարձրագոյն ուսումնարաններումը գաստիարակուածներն: Ով որ հրաժարի այս սրտաքը կատարելուց, պարտական է իր վերայ ծախք եղած գումարը կրկնապատիկ վերագարձնել, վասն զի այս միջոցը կարևոր է համարում արժանաւոր գաստիարակներ յառաջ բերելու համար: Սոյն ուսումն աւարտող որդեգիրներուն յիշեալ պաշտօնները յանձնելիս պէտք է վճարուի մի և նոյն ռոճիկը, ինչ որ իրանց պաշտօնի համար ուսումնարաններու կարգապարտութեամբ որոշված լինի:

18) Ուսումնարանի համար կտակած գումարի տոկոսիքից տարեցտարի 500 մանէթ գործ դրուի այս տեղացի (Հայոց) ծխական դպրոցներումն չքաւոր սովորող աշակերտաց գրեանք, թուղթ, գրիչ և միւս հարկաւոր իրեղիններ գնելու համար:

19) Այս գումարի տոկոսիքիցը երկու չքաւոր Հայ տղայք ուղարկուին սահմանից դուրս իմ կտակակատարների անընդմիջական ընտրողութեամբ, որպէս զի Անդրակովկասեան երկիրներումը կարևոր համբուած որ և իցէ ճարտարութիւն և արհեստ սովորին, վճարելով նոյն իսկ իմ կտակակատարներու հաճութեամբն նոցա ապրուստի ծախքը, եթէ հարկաւոր կ'համարվի, որոհեաւ աշակերտքը այնտեղ որոշեալ ժամակաւ կարեն ընդունուիլ ձրիապէս, ինչպէս որ այս սովորութիւնը կայ արհեստաւորաց մէջ, ուստի այս վերջին դիպուածումն տարէնը 200 ռուբլի յետ գրուի այս աշակերտաց ամէն մէկի համար, որ և յանձնուի իրանց, երբ վերագառնան Թիֆլիզ, որպէս զի իրանց ձեռնարկութեան համար պէտք ածեն, թէ որ իրանց ուսմունքը յաջողակութեամբ աւարտած լինին: Այս փողկը պէտք է դուրս հանել նրանց գնալ գալու ծախքը չքայտք է գրկել նոցա այս ճամբու ծախքիցը, թէ որ նոքա առանց յաջողութեան ևս վերագառնան. ըստ որում առանց էն էլ նոցա համար բաւական կորուստ է իրանց անուամբը տարեցտարի հաւաքուած գումարից գրկուիլը: Հիւանդութեան պատճառաւ վերագառնալը չիղրկում նրանց այս գումարը ընդունելու իրաւունքից: Երկու տղայոց սահմանից դուրս ուղարկելը ամէն անգամ պէտք է կրկնուի, երբ գնացողներն վերագառնան:

20) Եթէ որ և իցէ արդէլք պատահի տղայք սահմանից դուրս

ուղարկելու, այն ժամանակը նոյն զրկուողներուն հասանելի սովորելքն թողնուի Ներսիսեան ուսումնարանի օգտի համար նոյն տեղի աշակերտաց թիւն աւելացնելու նպատակաւ:

21) Ներսիսեան դպրոցը և վերին ուսումնարաններ մանուկ, նոյնպէս և արտասահման ուղարկելու ճարտարութիւն և արհեստ սովորելու աշակերտաց ընտրողութիւնը, նոցա դաստիարակութեան վերոյ աչք պահելը և կտակած զումարի սովորելքի օրինաւոր դործադրութեան մասին հսկողութիւնը յանձնում եմ իմ կտակակատարներին:

22) Ներսիսեան աղգային հոգևոր ուսումնարանը տարին մի անգամ պատարագ մատուցանելու է իմ մեղապարտ հոգևոյս փրկութեան համար և օրհնել տալու է զերեզմանս:

23) Նոյն ուսումնարանին հասնելու գումարը մնալու է այնտեղ, քանի որ այս ուսումնարանը կոչուում է Ներսիսեան—Աղգային Հոգևոր դպրոց և քանի որ ներկայ դրութեանս մէջ մնում է, այսինքն՝ հոգևոր կառավարութեան ներքոյ ազգի կողմանէ ընտրուած աշխարհականաց դործակցութեամբ, ինչպէս որ այժմ ներկայումս պահպանվում է: Թէ որ այս սկզբունքը որ և իցէ պատճառով փոփոխվին, իմ կտակակատարքը, Հայաստանեաց եկեղեցւոյ զխաւոր տեսչութեան հետ խորհրդակցելով, կտակած զումարս դործ դնելու են մի այլ դպրոց հաստատելու համար սոյն այս հիմանց վերայ, որովհետեւ իմ նուերքի բուն նպատակն է առաւելապէս կրթել և պատրաստել արժանաւոր սրաշտօնեայք Հայաստանեաց եկեղեցւոյ համար: Այս դէպքումն եթէ կարծեաց տարբերութիւն ծագի եկեղեցական իշխանութեան և իմ կտակակատարաց մէջ, առաւելապէս իմ կտակակատարաց կարծիքն ՚ի կատար ածելու է:

24) Որովհետեւ իմ դրամագումարը մեծ մասամբ դնուում է մանաւոր անձանց ձեռին, վանորոյ եթէ կորուստ ինչ պատահի, բոլոր կորցրածը բաժանելու է ամէնի վերայ նոյն չափով, որքան ուրբուն բաժին հասնի: Բոլոր գումարները երբ հաւաքուին, բացի բաշխելու և բաժանելու դրամներից, դնելու է Անդրակովկասեան հասարակաց խնամատարութեան Սեզանատունը (Зак. Приказ. Общ. Приобрѣнія) և կամ մի այլ ապահով տեղ (учреждение),

որ տոկոսիք բերէ յիշատակեալ հարկաւորութեանց պէտք ածելու համար:

25) Այս իմ կտակադիրս կատար ածելու համար, նոյնպէս և իմ ստանալիքներս ժողովելու և այնուհետև իմ վերջին կամքս կատար ածելու համար ինձ կտակակատար նշանակում եմ Գրիգոր Յովհաննիսեան Աղմիրեանցին (նաղվօրնի սովկեանիկ) և Թիֆլիզու երկու պատուաւոր քաղաքացիներին՝ Գաբրիէլ Յովհաննէսեան Տէր Միքայէլեանցին և Աւետիք Բուղդանեան Ավէչնիկեանցին, տարով սրանց լիակատար իրաւունք, որ և թէ որ և իցէ տարակուսութիւն և երկմտութիւն ծագի, իրանք ամէն դժուարութիւն լուծեն խղճմտանքով: Նոյն այս իրաւունքը (թէ որ իրանց միջից մէկն ու մէկին մահ կամ այլ ղխուած պտտահի) մին ուրիշին կամ իրանցից մէկն ու մէկին փոխանցելու իշխանութիւնը իրանց նայեցողութեան թողնում եմ. նոր ընտրուածներն այս կերպով տէր են դառնում իրանց նախորդի բոլոր իրաւունքներին և գործում են այնպէս, ինչպէս որ պիտի գործէին նոյն իսկ կտակակատարքը: Աւ որովհետև ամենայն մարդիկ մահկանացու բնութեան ենթարկուած են, վասն որոյ և իմ կտակակատարներից կարգուած յաջորդները կարող են իրանց տուած իրաւունքը ուրիշներին փոխանցել, նոյնպէս և այս վերջիններս այլոյ, և այսպէս մէկը միւսին յաջորդաբար, թէ որ իրանք այս իրաւունքներն փոխանցնելու արտօնութիւնը իրանց նախորդից ստացած ինչին: Թէ որ կտակակատարներից մէկն ու մէկը մեռնի առանց այսպիսի տնօրէնութիւն անելու, կենդանի մնացողներն ունին իրաւունք նորա տեղն այլ ոք հրաւիրելու իւրեանց իսկ հաւանութեամբը, թէ որ բաւական չ'համարին շատանալ կենդանի մնացեալ կտակակատարների թուովն: Թէ որ պատահի, որ բոլոր կտակակատարքն մեռնին առանց կարգադրութիւն անելու, այն ժամանակ նոր կտակակատարներ սահմանեալ թուով ընտրելու են Թիֆլիզու Ներսիսեան—Ազգային—Հոգևոր ուսումնարանի հոգաբարձուքը:

26) Աւերոյիշեալ իմ կտակակատարներին իրաւունք եմ տալիս (որոնք և նոյնպէս կարեն, թէ որ հարկը պահանջէ, նոյն իրաւունքը իրանց մահուանից յետոյ ուրիշին փոխանցել) խղճմտանքով վերջացնելու այն ամէն իմ առևտրական հաշիւներս, որ ու-

նիմ էս իմ ընկերներուս հետ. սոցա կարգումն է նոյնպէս և այս 1862 թուին Կովկասեան բանակի զօրացը հացի պաշար հասցնելու մեր ընկերական գործողութեան (операция) հաշիւը, նոյնպէս և Провиантская коммисіяի հետ ունեցած հաշիւներս, որոյ հետ իմ ունեցած հաշիւներս առաջվանից իմ վերկալած կապալառութեանց մասին տակաւին մնում են թերակատար, վասն որոյ և հարկաւոր է այս գործոց հետևողութիւն անել լիակատար իրաւունքով և պաշտպանել իմ օգուտը, տալով խնդիր և դիր ուր տեղ և ինչպէս հարկաւոր համարուի: Այս յիշատակեալ Օպերացիան երկից ինչ շահ որ դուրս բերուի, բոլորը նոյնպէս Թիֆլիզու Ներսիսեան Ազգային Հոգևոր դպրոցի օգտին դարձնելու է որդեգրաց թիւը յաւելացնելու, կամ երկու և զոնէ մի չքաւոր հայ աղջիկ մարդու տալու համար, ինչպէս պատշաճ համարին իմ կտակակատարքը: Սոյնօրինակ պէտք է վարուիլ թէ որ ուր և իցէ ատենական տեղերումն լոյս ընկնին գործքեր և որքան փող զոյանայ այսպիսի գործքերից, բոլորն էլ Ներսիսեան ուսումնարանի օգտին դարձնելու է: Վերոյիշատակեալ զումարներու բաժանումը պէտքէ կատարվի, երբ որ բոլոր իմ փողերս ժողովվին. իսկ իմ թագումի համար նշանակված երեք հազար ուսուցի վերկայնելու է առաջին անգամ ստացուած զբամներից:

27) Իմ պարտքերս, որոնք նշանակուած են իմ հաշուեմատենումը, վճարելու են առաջին անգամ ստացուած փողերից, նոյնպէս իմ կնոջս Նունէին մինչև իմ բոլոր գումարի ժողովիլը հասցնելու է առաջին անգամ ներս եկած փողերից տասն հազար ուսուցի. նմանապէս եղբորս Կարապետ էֆէնդեանցին առաջուց տուն եկած փողերից հասցնելու է նրա համար կտակած գումարի կէսը՝ այսինքն 500 ուսուցի:

28) Ի վերջ ամենայնի այս իմ կտակի խօսքերէս զբողին և վկաներուս իրաւունք եմ տալիս ամենայն կասկածանք փարատելու համար ստորագրել այս իմ կտակագիրս վաւելացմամբ թերթերի Թղստոսի 4-ն 1862 ամի Բ. Թիֆլիզ:

(Հաստատուեցաւ Թիֆլիզու քաղաքական և քրէական գործոց Պալատումը ի 23-ն Հոկտեմբերի 1862 ամի համարաւ 324)

Ուղղիչ է իսկականի հետ. կտակակատարը) Գ. Եզմիրեանց
) Ս. Սիէնիկեանց




ՀԱՂԻԻ

Կտակահատարաց Հանգուցեալ Յովսէփ Էֆէնդեանցի, Գրիգոր Իզմիրեանցի
և Աւետիք Սվէշիկեանցի և քաղուածք Յովսէփ Էֆէնդեանցի Հաշուեմատենից
յԶ-էն Օգոստոսի 1862 ամի ց1-ն Յունվարի 1872 ամի.

Ի Փետրվարի 1872 ամի

ԹԿՓԼԻՈ.

— 0000 —



Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՉՈՒՄԱՅ ԷՆՅԻԱՃՆԱՆՅ ՆԻ ԸՆԿ.

1872

Տ Փ Խ Ի Ս

Յովսէփ Էֆէնդեանցի մատենի Հաշիւով և յօդուածների Համարներով նրա ստորագրութեամբ յ 2 ն օգոստոսի 1862 ամի:

